ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՖԻԶԻԿԱ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

Հետազոտող ուսուցիչ՝ Լուսինե Մելիքյան

Ստեփանավանի թիվ 6 միջն. դպրոց ՊՈԱԿ

2023 ուստարի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

1.1 Սովորողի արժեքային համակարգի ձևավորման անհրաժեշտությունը դպրոցում.....4

1.2 Ֆիզիկա առարկայի շրջանակներում սովորողի արժեքային համակարգի ձևավորման հնարավորությունները.....9

Եզրակացություններ և առաջարկություններ.....15

Օգտագործված գրականության ցանկ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակական կյանքի անբաժանելի մաս հանդիսացող կրթությունը բոլոր դարաշրջաններում ուղղված է եղել հասարակության պահանջների բավարարմանը: Կրթության նպատակը մանկավարժության մեջ միշտ եղել է անփոփոխ' աճող սերունդը նախապատրաստել կյանքին, ձեւավորել տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք, ակտիվ անդամներ, իսկ կրթության խնդիրներն անընդհատ փոփոխվել են՝ պայմանավորված նոր հասարակական պահանջների ձեւավորմամբ, տվյալ հասարակության տնտեսական, գիտական, մշակութային զարգացմամբ: Արդի մանկավարժական որոնումները նպատակ ունեն ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցները, որ նրանց պասիվ ունկնդրողի դերը փոփոխվի ակտիվ մասնակցի դերով: Դրա շնորհիվ աշակերտները դառնում են առավել անկաշկանդ ու ինքնուրույն, նրանց մոտ ձեւավորվում են ուսման դրական դրդապատճառներ, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ: Սովորողների ճանաչողական կարողությունների ձեւավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ եւ կրթության կարեւոր խնդիր:

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Սովորողը պետք է հասկանա, որ յուրաքանչյուր առարկա ունակ է իրեն տալ բարձր բարոյական արժեքներ ու մարդկային որակներ: Սակայն հարկ է

փաստել, որ դպրոցի համար այդ նպատակին հասնելը հեշտ չէ: Ուստի և այս նպատակի համար պետք է խոսուն քայլեր կատարեն բոլոր մանկավարժական աշխատողները: Ֆիզիկայի ուսուցչի առաջ կանգնած է առարկայի ուսումնական ընթացքում դասընթացի նյութերի օգնությամբ արժեքային համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը: Ուստի կարևոր ենք համարում՝ այդ թվում և այս առարկայի ուսուցչի ջանքերը սովորողների մոտ արժեքային համակարգ ձևավերելու ճանապարհին:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Սույն հետազոտության արդիականության համաար հիմք է հանդիսացել ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ դիտարկվող արժեհամակարգի ձևավորման մեխանիզմների ուսումնասիրությունը ֆիզիկա առարկայի շրջանակներում:

Հետազոտության նպատակը: Ցույց տալ ֆիզիկա առարկայի դերը սովորողի կյանքում, ընդգծել դրա օգնությամբ սովորողներին ճիշտ ուղղորդելու և արժեքային համակարգ ձևավորելու անհրաժեշտությունը:

Հետազոտության խնդիրը: Ուսումնասիրել այն եղանակներն ու միջոցները, որոնք թույլ կտան ուսուցչին ֆիզիկայի դասավանդման ընթացքում առաջնահերթություն դարձնել նաև վերջիններիս արժեհամակարգի ձևավորումը:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՖԻԶԻԿԱ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

1.1 Սովորողի արժեքային համակարգի ձևավորման անհրաժեշտությունը դպրոցում:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Արժեքների մեծ մասի հենքը էթիկական նորմերից է բխում և ձևավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար,

քանի որ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի: Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, և որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձևավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի:

Կյանքի տարբեր ոլորտների նկատմամբ վերաբերմունքը մարդու մեջ ձևավորվում է նաև կրթության ընթացքում ստացած տեղեկատվության միջոցով: Կրթության սոցիալական ինստիտուտի միջոցով իրականանում է արժեքային մշակույթի փոխանցումը սերնդեսերունդ: Գրեթե միշտ դպրոցն է ստանձնում հանրության մեջ տարածված արատները պախարակողի դերը, պայքարում դրանք արմատախիլ անել սովորողների արժեքային համակարգից, ցույց տալ սովորողին լավի, բարու, մարդասիրության, ազնվության ու աշխատասիրության օրինակները: Այս առումով կարևոր է ցանկացած ուսումնական առարկա, որը սովորողին տալիս է իր դրական օրինակն ու ուղղորդումը: Օրինակ՝ ֆիզիկայի քիմիայի դասերին գիտնականների ու մտածողների կյանքն է օրինակ բերվում, ինչը նաև մոտիվացնող է: Մարդկային բարձր արժեքները շատ կարևոր են եղել մարդկային հասարակության համար հնուց ի վեր, այդպես է և այսօր, ուստի մարդկային որոկական այս հատկանիշը պետք է անդադար ուշադրության կենտրոնում լինի:

Երեխաների դաստիարակչական ծրագրերի մեջ կարևոր տեղ պետք է գրավեն երեխաների բնույթի մեջ նկատված կամայականության, էգոիզմի, երեսպաշտության, անարդարամտության, անտարբերության, չարության, ընչաքաղցության և այլ ամոթալի երևույթների իսպառ վերակառուցումը: Հաղթահարել դրանք՝ կնշանակի փակել դրանց վարակի ճանապարհը, փրկել ուրիշ երեխաների :

Արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից զատ: Անձի արժեքների համակարգը ձևավորվում է սոցիալականացման ընթացքում: Արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով: Անձնային արժեքները ձևավորվում են սոցիալականացման ամբողջ ընթացքում: Կարող ենք վստահաբար պնդել, որ սովորողի արժեհամակարգի հիմնական մասի ձևավորման համար պատասխանատու է դպրոցական միջավայրը, քանի որ այստեղ է տեղի ունենում նաև սովորողի իմացական առաջընթացն ու կարողունակությունների զարգացումը, իսկ դրանք մեծապես կապված են

արժեքային համակարգի հետ և փոխլրացնում են միմյանց: Ուսուցչի դաստիարակչական աշխատանքի ընթացքում զարգանում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը դժվարությունները հաղթահարելու գործում ձևավորում են համառություն , ինանակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Կրթական տարբեր աստիճաններում սովորողն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում :

Աշխարհի մասին պատկերացումները, բարոյական հայացքները և համոզմունքները, մտածելակերպը և աշխարհայացքը, հետաքրքրությունները, ձգտումները և արժեքները պայմանավորվում են խմբային գիտակցության առանձնահատկություններով, որում անձը ձևավորվում է և որում ընթանում է նրա առօրյա գործունեությունը: Այս առումով կրկին պետք է առանձնացնել դպրոցի անուղղակի և ուղղորդված ներգործությունը, ինչը միտված են սովորողի արժեհամակարգի զարգացմանը: Արժեհամակարգի ձևավորման ու բնականոն զարգացման վրա ուղղակիորեն ազդում է բարոյահոգեբանական մթնոլորտը: Այստեղ շատ կարևոր է ուսուցչի կողմից կոնֆլիկտային իրավիճակների ճիշտ կառավարումը:

Մանկավարժական գործընթացում հանդիպող շատ իրավիճակներ վերածվում են մանկավարժական խնդիրների՝ մանկավարժներին, աշակերտներին ու նրանց ծնողներին դրդելով իրավիճակների վերլուծությանը, առաջարկվող լուծումների տարբերակների գնահատմանը,

լավագույն տարբերակի ընտրությանը և իրականացման պլանի մշակմանը: Շատ կարևոր է, դասավանդող ուսուցիչները ուշադրություն դարձնեն ցանկացած մանկավարժական իրավիճակի, ճիշտ մոտեցում ցուցաբերեն և խնդրահարույց իրավիճակին համապատասխան լուծում տան՝ ելնելով մանկավարժական գործընթացի նպատակից, մանկավարժական իրավիճակի բնույթից, աշակերտների տարիքային առանձնահատկություններից և այլն :

Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել սովորողի համար: Նա պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը: Արժեքային համակարգի ձևավորման գործում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մի շարք գործոններ, որոնց թվում են սոցիալական պայմանները, անձի սոցիալականացման բնութագրիչները, շարժառիթային ոլորտի առանձնահատկությունները և անձնային բնութագրիչները:

Օրենսդրական դաշտում ևս կան հստակ նկատառումներ, թե ինչպիսին պիտի լինի սովորողի արժեքային համակարգը, համաձային որոնց՝ արժեքային համակարգի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

- ա. գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,
- բ. հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- գ. գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,
- դ. գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը,
- ե. կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ,

- զ. կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը,
- է. գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ. լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,
- ը. գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,
- թ. հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,
- ժ. անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը,
- ժա. դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը,
- ժբ. մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում :

Այսպիսով, կարող ենք պնդել մեր այն համոզմունքը, որ սովորողի արժեքային համակարգի հիմնասյուները դրվում են դպրոցում: Դասապրոցեսը, սովորողների միջանձնային շփումները, լայն շրջանակների հետ համագործակցությունը իրենց ազդեցությունն են թողնում սովորողի հետաքրքրությունների շրջանակի, դիրքորոշումների, համոզմունքների վրա, ուստի այս տեսանկյունից կարևոր է ուսուցչի ուղղորդումը, լավի ու վատի պատկերավոր ցուցադրումը դասի բովանդակային կառուցվածքի մեջ: Այս առումով կարևոր ենք համարում նաև ուսուցիչ-ծնող հարաբերությունների բարձր մակարդակը, որը նույնպես թույլ կտա զերծ պահել սովորողներին խնդրահարույց ու բացասական իրողություններից և վերջինիս արժեհամակարգի ձևավորումը դնել ճիշտ ուղենիշի վրա:

1.2 Ֆիզիկա առարկայի շրջանակներում սովորողի արժեքային համակարգի ձևավորման հնարավորությունները

Հանրակրթական դպրոցն իր ուղիղ ներգործությունն ունի սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործընթացում: Ուսուցման գործընթացի ընթացքում դաստիարակչական աշխատանքների իրականացումը խիստ կարևոր հանգամանք կարելի է համարել, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Այս ամենը համակարգված ձևով կարելի է իրականացնել նաև ֆիզիկա առարկայի դասավանդման ընթացքում: Հանրակրթական դպրոցի ֆիզիկա առարկայի ուսուցման նպատակն է՝ զարգացնել սովորողների՝ բնության ճանաչողության մեթոդներին տիրապետելու, Ֆիզիկական երևույթները բացատրելու և տարբեր իրավիճաներում դրանք կիրառելու հմտություններ, ձևավորել սովորողների գիտական աշխարհայացի և ուսումը շարունակելու համար անհրաժեշտ հիմքեր, նպաստել նրանց արժեհամակարգի ձևավորմանը :

Անհերքելի է, որ դպրոցի հիմնական նպատակը կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակությունն է: Այնուամենայնիվ, այս գործընթացը բավականաչափ ժամանակատար է ու հատուկ մասնագիտական որակներ է պահանջում ուսուցչից: Այս պարագայում ֆիզիկայի ուսուցչի առաջ կանգնած է առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքային համակարգի ձևավորման ապահովման համար գտնել մատուցման արդյունավետ եղանակներ:

Ֆիզիկայի դասերին դաստիարակության խնդիրը պետք է հիմնված լինի մարդկային գործոնի գաղափարի օգտագործման վրա ՝ որպես գիտության գործառության որոշիչ սկիզբ: Ուսուցչի ակտիվ կենսական դիրքորոշումը, նրա գիտելիքների ու հետաքրքրությունների պաշարը կապահովեն սովորողի արժեհամակարգի ձևավորումը: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական

խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Ինչպես վերը նշել էինք, ֆիզիկայի դասաժամը նույնպես լավ հնարավորություններ է ստեղծում ուսուցչի համար դրական ու արժեքավոր փորձառություն տալ սովորողին:

Այս առարկայի դասերին ուսուցիչը պետք է փորձի համագործակցային հարաբերությունների միջոցով նախ և առաջ ձևավորի գիտական աշխարհայացք և ստեղծագործական մտածողություն: Իսկ ահա դասաժամի պրակտիկ ուղղվածությունը ձևավորում է ստացված գիտելիքներն ու հմտությունները առօրյա կյանքում օգտագործելու կարողություն: Ֆիզիկա առարկայի դասավանդման շրջանակներում դաստիարակության խնդիրը պետք է հիմնված լինի մարդկային գործոնի՝ գաղափարի օգտագործման վրա: Կարևոր է սովորողներին ծանոթացնել գիտնականի մտածողության ոճին, աշխատանքի արդյունքները մարդկանց պրակտիկ կարիքներին ծառայեցնելու նրանց ձգտմանը:

Վերջին երկու տասնամյակում հայ իրականության մեջ արժեքների փոխակերպումները շարունակական բնույթ են կրում: Այս գործընթացը մեծապես պայմանավորված է տարբեր ուղղորդում ունեցող տեղեկատվական հոսքերով, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ, համաշխարհային տեղեկատվական միջավայրի ձևավորմամբ, գիտության ու տեխնիկայի առաջընթացով: Այս պարագայում

սովորողների հետաքրքրությունների ուսումնասիրությունը, ժամանակին ստեղծված հետադարձ կապը թույլ կտա հստակեցնել սովորողի համար գերակա արժեքներն ու կողմնորոշել դրանք դեպի բնականոն զարգացում:

Ֆիզիկայի ավանդական ուսուցումը սովորողներին զինում է գիտելիքներով, որոնց հիման վրա ձևավորվում են հասկացությունները, տիպային խնդիրների լուծման, լաբորատոր աշխատանքների կատարման, ֆիզիկական երևույթների բացատրման կարողությունները: Դպրոցում աշակերտը պետք է ոչ միայն ձեռք բերի գիտելիքներ, այլ նաև զարգացնի մտածողությունը՝ սովորի մտածել, ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերի (զբաղվի ինքնուսուցմամբ) և այդ գիտելիքներն օգտագործի տեսական և գործնական խնդիրների լուծման ժամանակ: Ներկա ուսուցման հիմնախնդիրները քննարկելիս ավելի հաճախ է ընդգծվում, որ կարևոր է ձևավորել սովորողների ոչ միայն գիտելիքները, կարողությունները և հմտությունները, այլ նաև ստեղծագործող անհատի այնպիսի որակներ, ինչպիսիք են նախաձեռնողականությունը, անհատականությունը, ինքնուրույնությունը և ճկունությունը խնդիրները լուծելիս: Ֆիզիկական կրթությունն իր առջև նպատակ է դնում սովորեցնելու գործնական նշանակությամբ խնդիրները: Սակայն ուսուցման ձևերը ֆիզիկայի դասերին, որոնք մեծապես միտված են դեպի կրկնողություն, նյութի սերտում և վերարտադրման ուսումնական գործունեություն, ստեղծագործական մտածողության զարգացում գրեթե չեն ապահովում: Այդ պատճառով առանձնակի արդիական է դառնում ֆիզիկայի դասավանդման նոր, արդյունավետ մոտեցումների որոնումը, որը նպաստում է նշանակալից, կենսականորեն կարևոր հիմնախնդիրների լուծմանը պատրաստ ստեղծագործող անհատի ձևավորմանը :

Խոսելով դաստիարակչական հիմնախնդիրների մասին՝ նշենք, որ ներկայումս դրանք առավել սուր բնույթ են կրում: Դա պայմանավորված է նրանով, որ ժամանակակից պայմաններում երեխայի մանկությունն ընթանում է այնպիսի սոցիումում, որին բնորոշ են արժեքային սնակությունը, հստակ նպատակային կողմնորոշիչների բացակայությունը, սոցիալական շերտավորումների խորացումը, մանկական և պատանեկան միջավայրերում ձևավորվող կոնֆլիկտները, ընտանեկան դաստիարակության բացթողումները : Ֆիզիկայ առարկայի ուսուցման շրջանակներում անպայման պետք է խրախուսել սովորողի ինքնուրույնությունն ու ստեղծագործականությունը: Կասկածից վեր է, որ նման մոտեցումն էապես կնպաստի սովորողների մտածողության, արժեհամակարգի զարգացմանը:

Արժեհամագարգի ձևավորմանը կարող են մեծապես նպաստել ինտեգրված դասերի անցկացումը: Ժամանակակից գիտությունը պահանջում է համալիր գիտելիքների կիրառում, որը հիմնված է միջգիտական կարևոր ու պահանջարկված փոխգործակցության մասին: Եթե միջառարկայական ինտեգրացումն ու փոխգործակցությունը դպրոցում անհրաժեշտ մակարդակի վրա են, ապա դա, անկասկած, նպաստում է սովորողների մտավոր ստեղծագործական ունակությունների զարգացմանը, որն էլ մտածողության ինտեգրատիվ եղանակի զարգացման հիմք է դառնում, իսկ վերջինս հատկապես արագ զարգացող հասարակության մեջ վերին աստիճանի պահանջարկված է: Գիտական առումով ֆիզիկան ձևակերպում է խնդիրներ, որոնց լուծումը մաթեմատիկայում առաջացնում է նոր գաղափարներ, մոտեցումներ ու մեթոդներ, որոնք մաթեմատիկական նոր տեսության համար յուրահատուկ հիմք են դառնում: Ֆիզիկական տվյալ տեսությունը հիմնվում է գոյություն ունեցող մաթեմատիկական ապարատի վրա, սակայն վերջինս ֆիզիկայում ստեղծագործաբար օգտագործման շնորհիվ զարգանում է՝ զարգացնելով ինչպես ֆիզիկան, այնպես էլ մաթեմատիկան: Ինտեգրատիվ ուսուցման բավական մեծ պաշար ունեն ինտեգրատիվ բնույթի ֆիզիկաքիմիական, կենսաֆիզիկական, ֆիզիկաէկոլոգիական, ֆիզիկամաթեմատիկական, ֆիզիկատեխնիկական, ֆիզիկատեխնոլոգիական ընտրովի դասընթացները, որոնք ևս կարող են սովորողի արժեհամակարգի զարգացման վրա էական նշանակություն ունենալ:

Իսկ ի՞նչ ձևերով, մեթոդներով և տեխնոլոգիաներով է նպատակահարմար ֆիզիկայի դասաժամին սովորողին տալ հնարավորություն նաև արժեքներ տեսնել, գնահատել: Անշուշտ, դրան հասնելու համար նախ անհրաժեշտ է ֆիզիկայի ուսուցման գործընթացը անհատականացնել, որը նշանակում է՝

- ձևավորել սովորողների ճանաչողական հետաքրքրությունները, նրանց մտավոր և ստեղծագործ ունակությունները,
- սովորողներին տալ բնության ճանաչման հնարավորության գիտակցում՝ հիմք ընդունելով գիտության ձեռքբերումներն ու այդ հենքի վրա քաղաքակրթական զարգացումները,
- սովորողներին ընձեռել ֆիզիկական գիտելիքների ինքնուրույն ձեռք բերման հնարավորություն,
- անհատական ուղղորդված մոտեցումներով սովորողներին մոտիվացնել դեպի կրթության և ճանաչողության բնագիտական տիրույթ,

- ուսումնական նյութի նորարարություն, ֆիզիկայի օրենքների ու հետևությունների անսպասելիություն սովորողների համար,
- ուսումնական հայտնի բովանդակային նյութի ուսումնասիրում նոր տեսակետի առկայությամբ,
- ֆիզիկայի դասապրոցեսում այդ գիտության զարգացման պատմության առանձին դրվագների նպատակային օգտագործում և անդրադարձ,
- հաղորդած ուսումնական գիտելիքի կենսունակության և հրատապության ցուցադրում,
- սովորողների ծանոթացում գիտատեխնիկական ու տեխնոլոգիական նորություններին:

Այստեցից կարող ենք եզրահանգել, որ այս գիտությունն ունի համապատասխան զինանոցը՝ սովորողների գիտակցությունը բարձր մակարդակի վրա հասցնելու: Այստեղ կրկին կարևորենք առարկայի ուսուցչի դերակատարումը, ինչն առանցքային է այն տեսակետից, որ մեր առջև դրված խնդիրը իրատեսական է միմյայն ուսուցչի՝ դասը ճիշտ պլանավորելու ունակություններից ելնելով:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ուսումնական ծրագրերով նախատեսված բոլոր առարկաները՝ այդ թվում ֆիզիկան, կարող է սովորողի մեջ ձևավորել բարձր արժեքային համակարգ, իսկ այս հարցում ուսուցիչը պետք է ամեն բան անի, որ կարողանա ուսուցման գործընթացն այնպես կազմակերպել, որ ստանա առավելագույն արդյունք: Կցանկանայինք ավելացնել, նաև, որ սույն աշխատանքը մեծ չափով կօգնի մեզ մեր մանկավարժական հետագա գործունեության ընթացքում, որպեսզի էլ ավելի կառուցողական մոտենանք սովորողների մոտ արժեհամակարգի ձևավորմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերլուծելով ուսումնասիրության նյութը՝ կատարեցինք մի քանի արձանագրումներ, որոնք կներկայացնենք ստորև.

- Ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի մոտեցումներից, սեփական պարտականությունները գիտակցելուց և պատշաչ կատարումից:
- Հարկավոր է դրական օրինակի օգնությամբ սովորողի մոտ բարձր արժեքներ ձևավերել:
- Ուսուցիչը պետք է անդադար կատարելագործի իր մանկավարժական հմտությունները, կիրառի նոր մեթոդական հնարներ, վստահելի հարաբերություններ ձևավորի սովորողների հետ:
- Ժամանակի մարտահրավերներով պայմանավորված՝ ուսուցիչը պետք է ուսուցման նպատակների մեջ անպայման ունենա սովորել սովորոցնելով հասկացությունը:
- Հետադարձ կապը պետք է ուսուցչի համար դառնա ուսումնական գրծընթացը մշտադիտարկելու և համակարգելու գործիք:
- Սովորողի համար պետք է ստողծել այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն պահանջված ու կարևոր կզգա և բաց կլինի համագործակցության ու կարծիքների փոխանակման համար:
- Ուսուցիչը պետք է ամեն կերպ փորձի նպաստել բարձր մարդկային որակներ ու արդարամտություն, ազնվություն, մարդասիրություն՝ անկախ դասավանդվող առարկայից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=57923

   ՀՀ

   Կառավարության որոշում

2. https://escs.am/files/files/2020-07-

   15/cef0eb2e6c040db0cfde0da134e32084.pdf

   Հանրակրթական դպրոցի

   ֆիզիկա առարկայի չափորոշիչ և ծրագիր:

3. http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/mankavarjutyun.pdf

   Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան, «Մանկավարժություն», Երևան,

   2005:

4. https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf

   Ի. Փարեմուզյան, «Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական

   հաստատությունում»:

5. http://gspi.am/media/journal/2014n1b/22.pdf

   Գ. Ն. Հարությունյան, Մանկավարժական խնդիրները և դրանց լուծման

   ուղիները տարրական դպրոցում:

6. http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Krtutiun1996/2018(3-4).pdf

   Ն.Գ. Մովսիսյան, Ֆիզիկայի խնդիրների լուծման ժամանակ սովորողների

   մտածողության զարգացման մի քանի հիմնահարցերի մասին:

7. http://gspi.am/media/journal/2014n1b/20.pdf

   Ա. Մ. Ջաղոյան Խորհրդատվության դաստիարակչական դերը

   սովորողների պահվածքի ձևավորման գործում,

   Երևան, 2014, էջ 188: